ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2022թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ
ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրաբերություն ընդունել «Նոյ ինվեստ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Երևան համայնքին փոխանցվող գույքը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման կատարումն ապահովելու համար կնքել համապատասխան պայմանագրեր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022թ. _____
N _____-Ա որոշման

ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ «ՆՈՅ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՓՈԽԱՆՑՎՈՂ ԳՈՒՅՔ

1. Երևան քաղաքում շների զբոսանքի և վարժանքի համար նախատեսված զբոսայգու կահավորումը՝

1) Օղակաձև զբոսայգու 6-րդ գոտում՝ ընդհանուր 18 555 518 ՀՀ դրամ արժեքով,

2) Սիրո և հավատի այգում՝ ընդհանուր 12 805 500 ՀՀ դրամ արժեքով:

2. Երևան քաղաքում Սարալանջի 2-րդ հատվածում իրականացված կանաչապատում՝

1) Ծառեր՝ ընդհանուր 1 055 000 ՀՀ դրամ արժեքով,

2) Թփեր՝ ընդհանուր 2 652 000.7 ՀՀ դրամ արժեքով:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Նոյ ինվեստ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հայտնել է կամահայտնություն՝ Երևան համայնքի բարեկեցիկ և առողջ միջավայրի ստեղծմանն օժանդակելու հարցում: Մասնավորապես, Կենտրոն վարչական շրջանի Օղակաձև զբոսայգու 6-րդ հատածի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Սիրո և հավատի այգու տարածքներում կառուցվել են շների զբոսանքի համար տարածքներ, որոնք առանձնացված են փոքր և մեծ շների համար և կահավորված են շների վարժեցման համար անհրաժեշտ գույքով: Կենտրոն վարչական շրջանի Սարալանջի հատվածում կանաչապատման աշխատանքներ իրականացնելու նպատակով տնկվել են տարածքի բնակլիմայական պայմաններին հարմարեցված լայնատերև և մշտադալար ծառատեսակներ՝ բարելավելու տարածքի միկրոկլիմայական ցուցանիշները և ապահովելու տարածքի գեղագիտական տեսքը:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Գույքը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույքը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույքը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ